ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

մարտի 2025 թվականի № -Ա

«ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՕՊԵՐԱՏՈՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՏՈՒԳԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

1) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ն (այսուհետ՝ ՀԷՑ) 2025 թվականի հունվարի 8-ի №Ե-31-25 գրությամբ դիմել է ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ տեղեկացնելով, որ էլեկտրական էներգիայի տարեկան արտադրության կանխատեսվող հաշվեկշռով 2025 թվականի հունվար ամսին ՀԷՑ-ը «Արմփաուեր» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Արմփաուեր) էներգաբլոկից պետք է ձեռք բերեր շուրջ 180 մլն կՎտժ էլեկտրական էներգիա, որը հնարավոր է ապահովել վերջինիս՝ ամբողջ ամիս առավելագույն հզորությամբ աշխատելու պայմաններում, սակայն, «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Համակարգի օպերատոր) կարգավարական հրահանգով 2025 թվականի հունվարի 2-ին ժամը 14^{00}-ից մինչև հունվարի 4-ը ժամը 14^{00}-ն Արմփաուերի էներգաբլոկն անջատվել է և, ըստ ՀԷՑ-ի, ինքն ստիպված է եղել ձեռք բերել շուրջ 4,2 մլն կՎտժ էլեկտրական էներգիա հաշվեկշռման ծառայություն մատուցող արտադրողից (այսուհետ՝ ՀԾՄ) առավելագույն սակագնով՝ կրելով շուրջ 65 մլն դրամի վնաս,

2) Համակարգի օպերատորը իր 2025 թվականի հունվարի 14-ի №01-ԴԳ-12/21 գրությամբ պարզաբանել է, որ վերը նշված կարգավարական հրահանգը տրվել է Հանձնաժողովի 2019 թվականի դեկտեմբերի 25-ի №522-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական շուկայի հաղորդման ցանցային կանոնների (այսուհետ՝ ԷՀՑ կանոններ) 181-182-րդ կետերի հիման վրա՝ նպատակ ունենալով կանխել ներքին օդային գծերի թույլատրելի բեռի գերազանցումը և հաշվի առնելով «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ ԵրՋԷԿ)

գրությունը՝ վերջինիս կայանի անջատման դեպքում ցածր ջերմաստիճանի պայմաններում կաթսայի սառցակալման ու հետագա թողարկման խնդիրների վերաբերյալ,

3) ԷՀՑ կանոնների 84-րդ կետի համաձայն՝ էլեկտրական էներգիայի տարեկան արտադրության կանխատեսվող կառուցվածքը (այսուհետ՝ ԷԱՐԿ) կազմելիս և ամսական ու օրական շեղումների ճշտումները կատարելիս Համակարգի օպերատորը կարող է փոփոխել պետություն-մասնավոր գործընկերության պայմանագրի շրջանակում գործող էլեկտրական էներգիա արտադրողի, բացառությամբ՝ հաշվեկշռման և հաճախականության կարգավորման նպատակով երկրորդային և երրորդային պահուստ ապահովող արտադրողի (այսուհետ՝ ՊԷԱ կայան) էլեկտրական էներգիայի արտադրության կանխատեսվող ժամային գրաֆիկները ՀԷՑ-ի՝ էլեկտրական էներգիայի գնման համապատասխանաբար տարեկան, ամսական և օրական ծախսերն ու շեղումները նվազագույնի հասցնելու նպատակով՝ դրանք քննարկելով ՀԷՑ-ի և ՊԷԱ կայանների հետ,

4) ԷՀՑ կանոնների 151-րդ կետի համաձայն՝ Համակարգի օպերատորը ԷՕԿ մասնակիցներին (թվարկված են ԷՀՑ կանոնների 99-րդ կետում) կարգավարման գործընթացում ներառում է ԷՀՑ կանոնների 151-րդ կետի 1-3-րդ ենթակետերով նախատեսված դեպքերում,

5) ԷՀՑ կանոնների 152.1-ին կետի համաձայն՝ Համակարգի օպերատորը ՀԷՑ-ի՝ իր սպառողների պահանջարկի բավարարման համար անհրաժեշտ էլեկտրական էներգիայի գնման ծախսերը և առաջացող անհաշվեկշռույթները նվազագույնի հասցնելու նպատակով երկարաժամկետ պայմանագրերի բաղադրիչում ՀԷՑ-ի հետ պայմանագրեր կնքած ՊԷԱ կայաններին տալիս է կարգավարական կարգադրություններ, եթե առաջացել են ԷՀՑ կանոնների 84-րդ կետի համաձայն առաջարկված ԷԱՐԿ-ից շեղումներ,

6) ԷՀՑ կանոնների 84-րդ, 151-րդ և 152.1-ին կետերի պահանջների հնարավոր խախտման փաստի ուսումնասիրման նպատակով՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիման վրա Հանձնաժողովը 2025 թվականի հունվարի 16-ից Համակարգի օպերատորի նկատմամբ հարուցել է վարչական վարույթ, որի վերաբերյալ վերջինս ծանուցվել է Հանձնաժողովի 2025 թվականի հունվարի 16-ի № ՄՄ/34.3-Մ2-3/149-2025 գրությամբ,

7) Համակարգի օպերատորը 2025 թվականի հունվարի 27-ի №01-ԴԳ-12/51 գրությամբ ներկայացրել է իր պարզաբանումները՝ նշելով, որ 2025 թվականի հունվարի 2-ին Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական համակարգում էլեկտրական էներգիայի սպառման կտրուկ նվազումը բերել էր ներքին օդային գծերի թույլատրելի բեռի

գերազանցմանը (ժամը 12^{00}-ի դրությամբ՝ Նորադուզ-Գետափ օդային գծերով 350 ՄՎտ, ժամը 13^{00}-ի դրությամբ՝ Նորադուզ-Գետափ օդային գծերով 375 ՄՎտ), ինչը կանխելու նպատակով ԷՀՑ կանոնների 148-րդ կետի 5-րդ ենթակետի, 154-րդ և 181-182-րդ կետերի հիման վրա Համակարգի օպերատորի կարգավարական հրահանգով 2025 թվականի հունվարի 2-ին ժամը 14^{00}-ից մինչև հունվարի 4-ը ժամը 14^{00}-ն Արմփաուերի էներգաբլոկն անջատվել է պահուստ: Չնայած տվյալ իրավիճակում, համաձայն ԷՀՑ կանոնների 84-րդ և 152.1-ին կետերի, Համակարգի օպերատորը անջատվելու կարգավարական հրահանգ պետք է տար ԵրՋԷԿ-ին, սակայն վերջինիս նման հրահանգ չի տրվել՝ հաշվի առնելով ԵրՋԷԿ-ի 2024 թվականի դեկտեմբերի 19-ի №021597-2024 գրությունը, համաձայն որի՝ վերջինիս կայանի անջատման դեպքում՝ ցածր ջերմաստիճանի պայմաններում, դրսում գտնվող շոգեջրային սարքավորումների զգալի մասը կսառցակալեր, և հետագա թողարկումը կլիներ բարդ կամ անհնարին՝ էներգաբլոկի հարմարադասման կիսաբաց տիպով պայմանավորված: ԵրՋԷԿ-ի էներգաբլոկի երկարաժամկետ բացակայության պայմաններում՝ հաջորդող օրերին էլեկտրական էներգիայի սպառման աճով պայմանավորված, ըստ Համակարգի օպերատորի, պետք է հրահանգ տար գործարկելու «Հրազդանի էներգետիկ կազմակերպություն (Հրազդանի ՋԷԿ)» բաց բաժնետիրական ընկերության կայանը կամ «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության «Հրազդան-5» կայանը, ինչն ամբողջ համակարգում կհանգեցներ լրացուցիչ չնախատեսված ծախսերի: Համակարգի օպերատորը նշել է նաև, որ ԷՀՑ կանոնների 151-րդ կետը վերաբերում է ԷՀՑ կանոնների 99-րդ կետում նշված ԷՕԿ մասնակիցներին կարգավարական գործընթացում ներառելուն՝ հաշվեկշռման և հաճախականության, ռեակտիվ հզորության և լարման կարգավորման, ինչպես նաև լրիվ մարման դեպքում էլեկտրաէներգետիկական համակարգի վերակագնման համար Համակարգային ծառայության մատուցմանը: Տվյալ դեպքում ԷՀՑ կանոնների 151-րդ կետը չի կիրառվել, քանի որ համակարգում նման խնդիրներ չեն առաջացել և խնդիրները կապված են եղել Նորադուզ-Գետափ օդային գծերի գերբեռնումների հետ և կիրառվել է գերբեռնումների կանխման համար նախատեսված համապատասխան գործողություն, որը տվյալ իրավիճակում խնդրի հնարավոր միակ լուծումն էր,

8) իրականացված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ՝

ա. Համակարգի օպերատորի կողմից չի ապահովվել ԷՀՑ կանոնների 84-րդ և 152.1-ին կետերով սահմանված պահանջների կատարումը և 2025 թվականի հունվարի 2-ին

ժամը 14^{00}-ից մինչև հունվարի 4-ը ժամը 14^{00}-ն ընկած ժամանակահատվածի համար Արմփաուերի էներգաբլոկի անջատման կարգավարական հրահանգը տրվել է հիշյալ կետերի խախտումով՝ տվյալ ժամանակահատվածում ՀԷՑ-ի մոտ առաջացնելով էլեկտրական էներգիայի գնման լրացուցիչ ծախս, որը ՀԷՑ-ի սակագնային մարժայի և ԵրՋԷԿ-ի սակագնի վերանայման գործընթացի շրջանակում ԵրՋԷԿ-ում ձևավորված լրացուցիչ օգուտի հաշվին ամբողջությամբ չի փոխհատուցվելու: Մասնավորապես,

- էլեկտրաէներգետիկական շուկայի կառավարման ծրագրից արտահանված տվյալների համաձայն՝ 2025 թվականի հունվարի 2-ին ժամը 14^{00}-ից մինչև հունվարի 4-ը ժամը 14^{00}-ն ընկած ժամանակահատվածում ՀԷՑ-ը ունեցել է շուրջ 4.34 միլիոն կՎտժ բացասական անհաշվեկշռույթ, որի դիմաց ՀԾՄ-ին վճարման ենթակա գումարը կազմել է շուրջ 132.4 միլիոն դրամ (առանց ավելացված արժեքի հարկի), մինչդեռ Արմփաուերի կայանի աշխատանքի դեպքում՝ նշված անհաշվեկշռույթը չէր առաջանա և տվյալ քանակի էլեկտրական էներգիայի համար ՀԷՑ-ի կողմից Արմփաուերին վճարման ենթակա գումարը կկազմեր շուրջ 73.6 միլիոն դրամ (առանց ավելացված արժեքի հարկի): Այսպիսով, Համակարգի օպերատորի կողմից ՊԷԱ կայանի էլեկտրական էներգիայի արտադրության ժամային գրաֆիկի փոփոխության հետևանքով ՀԷՑ-ի էլեկտրական էներգիայի գնման ծախսը ավելացել է շուրջ 58.8 միլիոն դրամով (առանց ավելացված արժեքի հարկի), որը 2025 թվականի տարեվերջին սակագների վերանայման գործընթացի շրջանակում, համաձայն Հանձնաժողովի 2018 թվականի դեկտեմբերի 21-ի №748Ա որոշմամբ հաստատված էլեկտրական էներգիայի երաշխավորված մատակարարման ԼԷ №0633 լիցենզիայի պայմանների №1 հավելվածի, հավելյալ 12 տոկոս տոկոսադրույքի կիրառմամբ՝ գումարային 65.9 միլիոն դրամի (առանց ավելացված արժեքի հարկի) չափով սակագների միջոցով ենթակա է փոխհատուցման ՀԷՑ-ին,

-2025 թվականի հունվարի 2-ի ժամը 14^{00}-ից մինչև հունվարի 4-ը ժամը 14^{00}-ն ընկած ժամանակահատվածի համար Համակարգի օպերատորի կողմից տրված կարգավարական հրահանգի արդյունքում ՀԾՄ-ի կողմից ՀԷՑ-ին շուրջ 4.34 միլիոն կՎտժ էլեկտրական էներգիան հաշվեկշռման ծառայության առավելագույն սակագնով վաճառելու արդյունքում ՀԾՄ-ում կամ նույն ԵրՋԷԿ-ում ձևավորվել է շուրջ 59.6 միլիոն

դրամ (առանց ավելացված արժեքի հարկի) լրացուցիչ օգուտ (նշված քանակով էլեկտրական էներգիայի վաճառքից շուրջ 132.4 միլիոն դրամ լրացուցիչ հասույթի և իր կայանում այդ էլեկտրական էներգիայի արտադրության համար ծախսված բնական գազի շուրջ 72.8 միլիոն դրամ արժեքի (հաշվարկված 2025 թվականի հունվար ամսվա համար ԵրՋԷԿ-ի կայանում վառելիքի պայմանական փաստացի ծախսի, բնական գազի փաստացի ջերմարարության և Իրանի Իսլամական Հանրապետությունից ներկրվող բնական գազի հաշվարկային արժեքի՝ ներառյալ բնական գազի ջերմարարությամբ ճշգրտումը, փոխադրման ցանցի կորուստները, փոխադրման և գազամատակարարման համակարգի օպերատորի ծառայությունների արժեքը, հիման վրա) տարբերությունը), որը 2025 թվականի տարեվերջին սակագների վերանայման գործընթացի շրջանակում, համաձայն Հանձնաժողովի 2022 թվականի նոյեմբերի 29-ի №520-Ն որոշմամբ հաստատված էլեկտրաէներգետիկական համակարգում սակագների հաշվարկման մեթոդիկայի, ենթակա է նվազեցման ԵրՋԷԿ-ի կողմից ՀԷՑ-ին վաճառվող էլեկտրական էներգիայի սակագնի հաշվարկից, սակայն ամբողջությամբ չի չեզոքացնում Համակարգի օպերատորի վերը նշված կարգավարական հրահանգով ՀԷՑ-ում առաջացրած լրացուցիչ ծախսը և հանգեցնում է վերջինիս օրինական շահերի խախտմանը,

բ. Համակարգի օպերատորի կողմից որպես ԵրՋԷԿ-ի կայանը չանջատելու հիմնավորում ներկայացված՝ ցածր ջերմաստիճանի պայմաններում կայանի անջատման հնարավոր խնդիրների մասին ԵրՋԷԿ-ի 2024 թվականի դեկտեմբերի 19-ի №02/597-2024 գրությունը վերաբերում է էլեկտրաէներգետիկական համակարգի տարեկան կանխատեսվող հաշվեկշռով 2025 թվականի դեկտեմբեր ամսվա համար նախատեսված ԵրՋԷԿ-ի կայանի կանգառի վերաբերյալ ընկերության դիրքորոշմանը, որը Համակարգի օպերատորի կողմից հաշվի չի առնվել, և էլեկտրաէներգետիկական շուկայի կառավարման ծրագրում հրապարակված էլեկտրաէներգետիկական համակարգի տարեկան կանխատեսվող հաշվեկշռով 2025 թվականի դեկտեմբերի 13-ից մինչև դեկտեմբերի 31-ը նախատեսվել է ԵրՋԷԿ-ի կայանի կանգառ: Այսինքն, Համակարգի օպերատորը հիմնավոր չի համարել ցածր ջերմաստիճանի պայմաններում ԵրՋԷԿ-ի կայանի անջատման հնարավոր խնդիրների վերաբերյալ վերջինիս 2024 թվականի

դեկտեմբերի 19-ի №02/597-2024 գրությունը, ուստի, հիմնավոր չէ նաև, Համակարգի օպերատորի կողմից նույն պատճառաբանությամբ՝ ԵրՋԷԿ-ի կայանը 2025 թվականի հունվարի 2-4-ը չանջատելու հանգամանքը, և

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին և 11-րդ մասերը և «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. ԷՀՑ կանոնների 84-րդ և 152.1-ին կետերով սահմանված պահանջների խախտման համար Համակարգի օպերատորին տուգանել 1000000 (մեկ միլիոն) դրամ գումարի չափով :

2. Համակարգի օպերատորին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից մեկամսյա ժամկետում որոշման 1-ին կետով նախատեսված գումարը 900005242327 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:

4. Սույն որոշումը սահմանված ժամկետում կամովին չկատարվելու դեպքում ենթակա է հարկադիր կատարման՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքով սահմանված կարգով:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Համակարգի օպերատորին օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Մ. ՄԵՍՐՈՊՅԱՆ

ք. Երևան
մարտի 2025թ.